



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

15 դեկտեմբերի 2022 թվականի N 1920 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1565-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի «Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն անցկացնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 344-Ն, 2007 թվականի փետրվարի 15-ի N 346-Ն, 2007 թվականի ապրիլի 5-ի N 401-Ն ու 2011 թվականի մարտի 31-ի N 350-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1565-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) N 1 ցանկի «Շարժիչը և դրա համակարգերը» գլխի 1-ին կետում «և ածխաջրածինների՝ CH» բառերը փոխարինել «ածխաջրածինների՝ CH, ազոտի օքսիդների՝ NOx» բառերով, իսկ 2-րդ կետը «Դիզելային շարժիչի ծխայնության ստուգում» բառերից հետո լրացնել «և ազոտի օքսիդների՝ Nox, ածխածնի օքսիդի՝ CO, ածխաջրածինների՝ CH պարունակության ստուգում» բառերով.

2) N 2 ցանկի «Շարժիչի և դրա համակարգերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցները» գլխի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	8. Գազաանալիզատոր (սարք՝ կայծային բոնկմամբ (բենզինային, գազային) կամ դիզելային շարժիչներով ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակների չափման համար	ածխածնի օքսիդի (CO) պարունակությունը	0-5 %	3 %
		ածխածնի երկօքսիդի (CO ₂) պարունակությունը	0-16 %	3 %
		ածխաջրածինների (CH) պարունակությունը	500-4000 մլն ⁻¹	3 %
		ազոտի օքսիդների (NOx) պարունակությունը	0-4000 մլն ⁻¹	10 %
		ծնկաձև լիսեռի պտտման հաճախությունը	500-3500 րոպե ⁻¹	2.5 %

».

3) «Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի արատորոշման քարտ» ձևի «Շարժիչը և դրա համակարգերը» տողի 2-րդ սյունակում «CO-ի և CH-ի պարունակությունը» բառերը փոխարինել «CO-ի, CO₂-ի, CH-ի և NOx-ի պարունակությունը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան